Հաստատված է

<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Վարչության

<<28>> <<Հունիսի >> 2023թ

Թիվ 122/06-28.06.2023 որոշմամբ

Վարչության նախագահի Ժ/Պ

---------- Ա. Առաքելյան

Ուժի մեջ է մտնում <<03>> <<հուլիսի>> 2023թ.-ից
Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,
մանրամասների համար՝ www.aeb.am,
Հեռախոս - (37410) 8686, (37410) 51-09-10 (9104) - Բանկի տեղեկատու

ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2023

Անվանումը - <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ>> ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հասցե - Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1
Էլեկտրոնային հասցե - bank@aeb.am
Կայք – wwww.aeb.am
Հեռախոս - (37410) 8686, (37410)51-09-10 (9510)

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ	ԿՈՄԻՍԻՈՆ ՎՃԱՐ

Փաստաթղթային ակրեդիտիվ

Ակրեդիտիվը հնարավորություն է տալիս նվազեցնել ռիսկերը թե՛ Ներմուծողի, թե՛ Արտահանողի համար:

Բանկն ունի կնքած մի շարք պայմանագրեր առաջատար միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, Ասիական զարգացման բանկը և այլն: Մասնակցելով վերջիններիս Առևտրի խթանման ծրագրերին՝ Բանկը հնարավորություն ունի կատարել գործարքներ ծրագրին մասնակցող բազում երկների բանկերի լայն ցանկի հետ՝ դրանով իսկ մեծացնելով համագործակցության շրջանակը:

Ներմուծողը Բանկ է ներկայացնում համապատասխան հաշիվ ապրանքագիրը/պայմանագիրը, որը նախապես ուսումնասիրվում է Բանկի կողմից՝ համադրելով այն ակրեդիտիվի թողարկման պայմանների հետ /արժույթ, ժամկետ, երկիր/: Նշենք, որ Բանկը կարող է թողարկել ԱՄՆ դոլարով, եվրոյով և ռուսական ռուբլով, այլ արտարժույթով՝ ըստ գործարքի, ակրեդիտիվներ: Չկան նաև գումարի նվազագույն և առավելագույն սահմաններ: Հաշիվ ապրանքագիրը/պայմանագիրը ուսումնասիրելուց և դրական եզրակացության գալուց հետո, Բանկը կազմում է թողարկվող ակրեդիտիվի սևագիր տարբերակը և համաձայնեցնում է այն Ներմուծողի հետ. վերջինիս ցանկության դեպքում նաև Արտահանողի և Արտահանողի Բանկի հետ: Բոլոր կողմերի հետ նախապես համաձայնեցնելուց հետո Բանկը կնքում է համապատասխան պայմանագիրը Ներմուծողի հետ, սառեցնում է համապատասխան հաշվին ակրեդտիվով սահմանված գումարը և թողարկում է ակրեդիտիվը: Ծանուցող Բանկը SWIFT համակարգով ստանալով ակրեդիտիվը՝ ծանուցում է Արտահանողին իր օգտին թողարկված ակրեդիտիվի մասին:

Արտահանողը, իր պարտականությունները ակրեդիտիվով սահմանված ժամկետներում կատարելուց հետո, ակրեդիտիվով պահանջվող փաստաթղթերը մինչև ակրեդիտիվում նշված վերջնաժամկետը ներկայացնում է Կատարող բանկին:

Վերջինս ստուգում է փաստաթղթերի համապատասխանությունը ակրեդիտիվի պահանջների հետ և դրանց համընկման դեպքում՝ նախապես սառեցված գումարը ապասառեցվում է և փոխանցվում է Արտահանողին: Փաստաթղթերը հատուկ փոստային ծառայությունների միջոցով ուղարկվում են Բանկին, որն իր հերթին ևս ստուգում է փաստաթղթերը և տարաձայնություններ չլինելու պարագայում դրանք ներկայացնում Ներմուծողին:

Որպես լրացուցիչ ապահովություն՝ Բանկը կարող է առաջարկել նաև այլ առաջատար բանկերի կողմից ակրեդիտիվների հաստատում:

Համապատասխան դրամական միջոցներ չունենալու դեպքում Բանկը կարող է դիտարկել համապատասխան ծածկույթի տրամադրում:

Գործարքի իրականացման ժամանակ գանձվող միջնորդավճարները՝ ներառյալ միջնորդ բանկերի, Բանկի կողմից գանձվում են ՀՀ դրամով՝ հաշվարկված տվյալ օրվա ՀՀ ԿԲ կողմից սահմանված արտարժույթի փոխարժեքով:

Ելնելով տարաբնույթ հանգամանքներից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

Ծառայությունը մատուցվում է Բանկի բոլոր մասնաճյուղերում, բացառությամբ՝ «ՌՈՍԻԱ-1», «ԱՐԱՐԱՏՅԱՆ», «ՆԱԻՐԻ ԲԿ» մասնաճյուղերի:

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից եվ ապահովում է գաղտնիություն:

Ակրեդիտիվի ծանուցում	0.15% min 25 000 դրամ
Ակրեդիտիվի թողարկում	Յուրաքանչյուր եռամսյակի համար 0.15% min 40 000 դրամ
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»ԲԲԸ-ի կողմից թողարկված ակրեդիտիվի հաստատում այլ բանկի կողմից	պայմանագրային
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից այլ բանկերի թողարկած ակրեդիտիվի հաստատում	պայմանագրային
Ակրեդիտիվի փոխանցում	0.1% min 25 000 դրամ
Ակրեդիտիվի պայմանների փոփոխություն	30 000 դրամ
Ակրեդիտիվի չեղյալացում	30 000 դրամ
Առանց տարաձայնությունների ակրեդիտիվային փաստաթղթերի ընդունում և ստուգում	30 000 դրամ

Տարաձայնություններով ակրեդիտիվային փաստաթղթերի ընդունում և ստուգում	50 000 դրամ
Վճարումներ ակրեդիտիվի շրջանակներում ըստ փաստաթղթերի ներկայացման	0.15% min 10 000 դրամ, max 50 000 դրամ
ՎԶԵԲ (EBRD), ՄՖԿ (IFC) և ԱԶԲ (ADB) ծրագրերով ակրեդիտիվի թողարկում	50 000 դրամ
Ակրեդիտիվի պայմանների փոփոխություն, չեղյալացում ՎԶԵԲ (EBRD), ՄՖԿ (IFC) և ԱԶԲ (ADB) ծրագրերի շրջանակներում (լրացուցիչ գանձվում են նաև թղթակից բանկերի կողմից գանձվող միջնորդավճարները)	25 000 դրամ

Միջազգային երաշխիքի տրամադրում

Բանկային երաշխիքի պարագայում Բանկը հանդես է գալիս որպես իր հաճախորդի պարտավորությունների կատարման երաշխավոր և վճարում է Շահառուին երաշխիքով նախատեսված գումարը՝ համապատասխան պահանջի դեպքում:

Բանկը կարող է թողարկել տարբեր տեսակի բանկային երաշխիքներ՝ վճարման, պարտականությունների կատարման, կանխավճարի վերադարձման, տենդերային և այլն:

Որպես լրացուցիչ ապահովություն Բանկը կարող է առաջարկել նաև այլ առաջատար բանկերի կողմից երաշխիքների հաստատում: Բանկն ունի կնքած մի շարք պայմանագրեր առաջատար միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, Ասիական զարգացման բանկը և այլն: Մասնակցելով վերջիններիս Առևտրի խթանման ծրագրերին՝ Բանկը հնարավորություն ունի կատարել գործարքներ ծրագրին մասնակցող բազում երկների բանկերի լայն շրջանակի հետ:

Հաճախորդը Բանկ է ներկայացնում համապատասխան պայմանագիրը, որը նախապես ուսումնասիրվում է Բանկի կողմից՝ համադրելով այն Բանկային երաշխիքի թողարկման պայմանների հետ /արժույթ, ժամկետ, երկիր/: Նշենք, որ Բանկը կարող է թողարկել ԱՄՆ դոլարով, եվրոյով և ռուսական ռուբլով, այլ արտարժույթով՝ ըստ գործարքի, բանկային երաշխիքներ: Չկան նաև գումարի նվազագույն և առավելագույն սահմաններ:

Դրական եզրակացության գալուց հետո, Բանկը կազմում է թողարկվող երաշխիքի սևագիր տարբերակը և համաձայնեցնում է այն իր Հաճախորդի հետ, վերջինիս ցանկության դեպքում նաև Շահառուի և Շահառուի Բանկի հետ: Բոլոր կողմերի հետ նախապես համաձայնեցնելուց հետո Բանկը կնքում է համապատասխան պայմանագիրը Հաճախորդի հետ, Բանկում հաճախորդի կողմից գրավադրվում են երաշխիքի գումարին համապատասխան միջոցներ, ապա թողակվում է Բանկային երաշխիքը: Ծանուցող Բանկը, SWIFT համակարգով ստանալով Բանկային երաշխիքը, ծանուցում է Շահառուին իր օգտին թողարկված Բանկային երաշխիքի մասին:

Հաճախորդի կողմից պարտականությունների չկատարման պարագայում Բանկի կողմից Պահանջը ստանալուց հետո Բանկը վճարում է Շահառուին առավելագույնը բանկային երաշխիքով սահմանված գումարի չափով և փոխհատուցման գործընթաց սկսում իր հաճախորդի հետ՝ համաձայն Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրի:

Բանկը կարող է տրամադրել նաև միջազգային երաշխիքներ թղթային կրիչով՝ առանց երրորդ կողմի, Բանկի պաշտոնական ձևաթղթի վրա և երաշխիքի բովանդակությունը SWIFT համակարգի միջոցով Շահառուի Բանկին ծանուցելով:

Գործարքի իրականացման ժամանակ գանձվող միջնորդավճարները՝ ներառյալ միջնորդ բանկերի, Բանկի կողմից գանձվում են ՀՀ դրամով՝ հաշվարկված տվյալ օրվա ՀՀ ԿԲ կողմից սահմանված արտարժույթի փոխարժեքով:

Ելնելով տարաբնույթ հանգամանքներից՝ կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

Ծառայությունը մատուցվում է Բանկի բոլոր մասնաճյուղերում, բացառությամբ՝ «ՌՈՍԻԱ-1», «ԱՐԱՐԱՏՅԱՆ», «ՆԱԻՐԻ ԲԿ» մասնաճյուղերի:

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից եվ ապահովում է գաղտնիություն:

Դրամական միջոցների գրավադրմամբ	0.3% min 30 000 դրամ, max 400 000 դրամ
Երաշխիքի ծանուցում	0.15% min 25 000 դրամ
Երաշխիքի պայմանների փոփոխում, չեղյալացում	35 000 դրամ
Երաշխիքի դիմաց վճարում՝ համաձայն հաստատող բանկի պահանջի	0.5% min 50 000 դրամ

ՎԶԵԲ (EBRD),ՄՖԿ (IFC) և ԱԶԲ (ADB) ծրագրերով երաշխիքի թողարկում	0.3% min 50 000 դրամ, max 400 000 դրամ
Երաշխիքի պայմանների փոփոխում, չեղյալացում ՎԶԵԲ (EBRD), ՄՖԿ (IFC) և ԱԶԲ (ADB) ծրագրերի շրջանակներում (լրացուցիչ գանձվում են նաև թղթակից բանկերի կողմից գանձվող միջնորդավճարները)	35 000 դրամ
Թղթային կրիչով տրամադրված բանկային երաշխիքի ծանուցում այլ բանկին S.W.I.F.T. համակարգի միջոցով	25 000 դրամ
Փաստաթղթային ինկասո Ինկասոն հնարավորություն է տալիս Արտահանողին Բանկ ներկայացված փաստաթղթերի դիմաց Ներմուծողից ստանալ ապրանքի գումարը: Ինկասոյի դեպքում Բանկը կատարում է միջնորդի դեր. ներմուծողի կողմից ի օգուտ Արտահանողի վճարում կատարելու կամ ակցեպտավորելու պարագայում Ներմուծողին է տրամադրում նախատեսված փաստաթղթերը: Բանկը կարող է նաև իրականացնել փաստաթղթային ինկասոյի ուղարկում, որի պարագայում Արտահանողը համապատասխան փաստաթղթերը ներկայացնում է Բանկին, որն ընդունում է և ուղարկում ի օգուտ Շահառուի: Բանկը կարող է սպասարկել ցանկացած արժույթով փաստաթղթային ինկասո, չկան գումարի նվազագույն և առավելագույն սահմանափակումներ: Գործարքի իրականացման ժամանակ գանձվող միջնորդավճարները՝ ներառյալ միջնորդ բանկերի, Բանկի կողմից գանձվում են ՀՀ դրամով՝ հաշվարկված տվյալ օրվա ՀՀ ԿԲ կողմից սահմանված արտարժույթի փոխարժեքով: Ծառայությունը մատուցվում է Բանկի բոլոր մասնաճյուղերում, բացառությամբ՝ «ՌՈՍԻԱ-1», «ԱՐԱՐԱՏՅԱՆ», «ՆԱԻՐԻ ԲԿ» մասնաճյուղերի: Ելնելով տարաբնույթ հանգամանքներից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն: Դուք իրավունք ունեք հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից եվ ապահովում է գաղտնիություն:	
ա/ Փաստաթղթերի տրամադրում վճարի, կամ ակցեպտի դիմաց	0.2% min 25 000 դրամ, max 60 000 դրամ
բ/ Փաստաթղթային ինկասոյի ընդունում և ուղարկում	0.2% min 25 000 դրամ, max 150 000 դրամ
Ինկասոյի հանձնարարականի պայմանների փոփոխում, ներառյալ չեղյալ համարումը	15 000 դրամ
Ինկասոյի վճարում	0.2% min 11000 դրամ, max 50 000 դրամ

Լրացուցիչ գանձվում են նաև թղթակից բանկերի կողմից գանձվող միջնորդավճարները և փոստային ծախսերը:

Երաշխիքի գումարը՝ 5 000 000 ՀՀ դրամը (կամ համարժեք արտարժույթ) գերազանցելու դեպքում, գանձվող կոմիսիոն վճարի հաշվարկի օրինակ (օրինակում երաշխիքը տրամադրվել է 101 օրով)՝
25 000 դրամ * 12/365*101 = 83 013,6 ՀՀ դրամ: